ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունվարի 27-ից ապրիլի 26-ը ընկած ժամանակահատվածի համար էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչության փորձագետ Ռոբերտ Մարությանի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Ռոբերտ Մարությանս 2022 թվականի հունվարի 27-ին կնքված N 3 պայմանագրի հիման վրա աշխատում եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչությունում՝ որպես փորձագետ, 2022 թվականի հունվարի 27-ից մինչև ապրիլի 26-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- «Մեկ պատուհան» համակարգի ներդրման վերաբերյալ իրականցրել եմ ակտիվ իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ տնտեսվարողներին ներկայացվել է «Մեկ պատուհան» համակարգի միջոցով հայտերի ներկայացման գործընթացը, ինչպես նաև վերջիններիս էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրվել են «Մեկ պատուհան» համակարգից օգտվելու համար էլեկտրոնային ձեռնարկ/ուղեցույցները:
- «Մեկ պատուհան» համակարգ մուտք գործելու ընթացքում առաջացած մի շարք տեխնիկական խնդիրների, մասնավորապես՝ էլ. փոստին հետադարձ ծանուցման բացակայության պատճառով համակարգ հայտեր ներկայացնելու անհնարինությունը շտկելու նպատակով՝ նախարարության կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը տեղեկացվել է առաջացած խնդրի մասին, ինչպես նաև տվյալ խոչընդոտի վերացման համար իրականացվել է համապատասխան աշխատացի հետ համատեղ աշխատանքներ:
- Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան հարթակի լրամշակման շրջանակներում շարունակվում են իմ կողմից իրականացվող «Թույլատվական փաստաթղթեր» էլեկտրոնային համակարգի թեստավորման աշխատանքները՝ հնարավոր խոչընդոտները բացառելու նպատակով:

Միաժամանակ հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում եմ, որ նշված ժամանակահատվածում հայտեր չեն մուտքագրվել:

Հարգանքով՝

26.04.2022

Ռոբերտ Մարության